Ձևաչափ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԹԵՄԱՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ - 2024

ԲԱԶԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

(տվյալները ներկայացնել 01 հունիս 2024թ. դրությամբ)

Կազմակերպության անվանում	ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ
Ծրագրի վերնագիր	Հայաստանի բուսական աշխարհի ուսումնասիրության և պահպանության էկոլոգաաշխարհագրական ասպեկտները
2024 թ. պայմանագրով նախատեսված ֆինանսավորման չափ	239 595 884 (երկու հարյուր երեսուն ինը միլիոն հինգ հարյուր իննսունհինգ հազար ութ հարյուր ութսուն չորս) ՀՀ դրամ
Աշխատակիցների քանակ Վարչական, տեխնիկական, սպասարկող /գիտական	39- վարչասպասարկող անձնակազմ / 44-գիտական
Ստորաբաժանումների քանակ	5

Լրիվ ծանրաբեռնվածությամբ աշխատակիցներ (շաբաթական 40 ժամ)

	Պաշտոնի անվանում	Քանակ
1.	Ստորաբաժանման ղեկավար	5
2.	Խմբի ղեկավար	1
3.	Գլխավոր գիտաշխատող	0
4.	Առաջատար գիտաշխատող	3
5.	Ավագ գիտաշխատող	5
6.	Գիտաշխատող	9
7.	Կրտսեր գիտաշխատող	4
8.	Ավագ լաբորանտ	3
9.	Լաբորանտ	1
10	Ավագ Ճարտարագետ	0
11.	Ճարտարագետ	0

Հրատարակած գիտական աշխատանքներ

Հրատարակված գիտական աշխատանքներ -15, հանձնված է տպագրության -10:

Գիտաժողովներ, այցելություններ, գիտական միջոցառումներ

- Պրոֆեսոր Սուն Հանգ ՉԳԱ Կունմինի բուսաբանության ինստիտուտ «Յունան նահանգի կենսաբազմազանությունը»:
- Եվգենիյ Բոլտենկովի Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Հեռավոր Արևելքի մասնաճյուղի բուսաբանական այգի-ինստիտուտ «Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Հեռավոր Արևելքի մասնաճյուղի բուսաբանական այգի-ինստիտուտը որպես Ռուսաստանի Հեռավոր Արևելքի բույսերի պահպանման և հետազոտման կենտրոն»
- Գիտաշխատող Դենիս Վինոկուրով Կենսաբազմազանության ինտեգրված ուսումնասիրությունների Գերմանական կենտրոնի (iDiv) «Հայաստանի չոր խոտաբուսային և փշոտ բուսական համակեցությունների առաջին դասակարգումը»
- Յուրի Մարտիրոսյան ՌԳԱ Ն.Մ. Էմանուելի անվան կենսաքիմիական ֆիզիկայի ինստիտուտի Կենսաքիմիական ֆիզիկայի և բույսերի նյութափոխանակության ճարտարագիտության լաբորատորիայի վարիչ «Աերոպոնիկայի վրա հիմնված ֆիտոտրոնային տեխնոլոգիաների կիրառում գյուղատնտեսական մթերքների, դեղորայքային հումքի և կենսապոլիմերների արտադրության համար» թեմայով դասախոսությունը: Նա ծանոթացրեց աէրոպոնիկայի ժամանակակից տեխնոլոգիաներին, դրանց կիրառմանը կյանքի տարբեր բնագավառներում»:
- Տանիել Դանիելյանի Լիլի համալսարանի երկրագիտության դեպարտամենտի պրոֆեսոր Շերտագրության վերելքը (ծագումը) և դրա կարևորությունը զանգվածային անհետացումների, անցյալի կլիմայի փոփոխության և Երկրի համակարգի վերաբերյալ գիտությունները հասկանալու համար:

Ձեռքբերված սարքեր/սարքավորումներ, գույք

	Անվանում	Քանակ	Արժեք
1.			
2.			
3.			
4.			
5.			

Ծրագրի ընթացքն՝ ըստ օրացուցային պլանի (առավելագույնը 2 էջ)

Ըստ նախատեսված օրացույցային պլանի 2024 թ-ի հունիսի 1-ի դրությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Հայաստանի էնդեմիկ տեսակների ցուցակի ճշտում, ամենահազվագյուտ տեսակների դաշտային ուսումնասիրություններ:
- Իկոնոտեկայի՝ լուսային և սկաներային մանրադիտակի մակարդակով

ծաղկափոշու թվային լուսանկարների հավաքածուի ստեղծման աշխատանքներ:

- Շարունակվում են Convolvulaceae ընտանիքի ծաղկափոշու պոլիմորֆիզմի ուսումնասիրությունները՝ ծաղկափոշու ապերտուրային և քանդակի տիպերի էվոլյուցիայի հնարավոր ուղիները բացահայտելու նպատակով:
- Շարունակվում են Corylaceae և Betulaceae ընտանիքների օրինակով ծաղկափոշու ծլանցքային ապերտուրային տիպերի ուսումնասիրության մեթոդաբանական ասպեկտների մշակում:
- Շարունակվում են կլիմայի փոփոխության հետ կապված՝ մի քանի տաքսոնների տարբեր և նմանատիպ կենսաձևի, մորֆոլոգիայի, ադապտիվ պոտենցիալի հայտնաբերման աշխատանքները:
- Շարունակվում են Malvaceae ընտանիքի կարգաբանական ուսումնասիրությունները:
- Շարունակվում են Հայաստանի ֆլորայի դժվար ծլող տեսակների բազմացման ֆիզիոլոգիան մեկուսացված կուլտուրայի և սերմային մեթոդների միջոցով աշխատանքները:
- Հայաստանի ֆլորայի վտանգված և արժեքավոր բուսատեսակների պոպուլյացիաների գենետիկական պոլիմորֆիզմի ուսումնասիրությունները:
- Ինստիտուտի տարբեր գիտական հավաքածուների տվյալների բազայի համալրման աշխատանքների կազմակերպում, կենդանի հավաքածուների համալրում:
- Շարունակվում են հազվագյուտ տեսակների ցանքսի և ծլեցման համար սերմերի նախապատրաստում:
- Սերմերի ցուցակի կազմում Բուսաբանության ինստիտուտի դելեկտուսի համար:
- Շարունակվում են Հայաստանի ֆլորայի հազվագյուտ, անհետացող, էնդեմիկ բույսերի ցիտոլոգիական, կարիոլոգիական ուսումնասիրությունները:
- Շարունակվում են Սևանի և ՀՀ տարածքի այլ լճերի տորֆային ու հատակային նստվածքների ուսումնասիրության ուղղությամբ աշխատանքները:
- Շարունակվում են Հայաստանի բուսականության դասակարգման սխեմայի վերաբերյալ աշխատանքները: Հայաստանի էկոհամակարգերի և նրանց փոփոխությունների ուսումնասիրությունները, էկոհամակարգերի վիճակի գնահատման, գոյության սպառնալիքների պարզաբանման, կլիմայի փոփոխության պատճառով հնարավոր փոփոխությունների կանխատեսման, ինվազիվ տեսակների տարածման, ինչպես նաև այլ սպառնալիքների գնահատման վերաբերյալ:
- Էկոֆիզիոլոգիական հետազոտությունների ոլորտում իրականացվում են Հայաստանի վտանգված բուսատեսակների էկոլոգո-ֆիզիոլոգիական և

կենսաբանական հարմարողականության համեմատական գնահատումը, խոցելիության հնարավոր պատճառների բացահայտում in-situ պայմաններում և Հայաստանի բուսաբանական այգիներում համապատասխան պայմանների ստեղծում՝ հազվագյուտ տեսակների աճեցման և ex-situ պահպանության համար:

- Իրականացվում են նաև դաշտային աշխատանքներ էքսպոզիցիոն հողամասում: Տարածքի բարելավում, հավաքածուի գույքագրում, շարունակվում են Հայաստանի վայրի և որոշ մշակովի պղատու բույսերի հավաքածույի ստեղծման և համալրման աշխատանքները:
- Իրականացվում են բուսաբանական այգու ծաղկանոցների ձևավորման և խնամքի հետ կապված աշխատանքներ:
- Շարունակվում են Հայաստանի ֆլորայի հազվագյուտ գեղազարդ բուսատեսակների ներմուծման և կլիմայավարժեցման նվիրված ուսումնասիրությունները՝ ծաղկաբույսերի հավաքածուի հարստացման ու ցուցադրման, և հետագայում քաղաքային այգիներում դրանց օգտագործելու նպատակով:
- Շարունակվում են արևադարձային և մերձարևադարձային բույսերին նվիրված ուսումնասիրությունները Երևանի բուսաբանական այգու կոլեկցիոն ջերմատան պայմաններում նոր գեղազարդ տաքսոններով համալրման, դրանց էկոլոգիական հարմարողականության պարզաբանման, ինչպես նաև առավել գեղազարդ ու դիմացկուն տեսակներն ինտերերային կանաչապատման մեջ առաջարկման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԹԵՄԱՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ – 2024

ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

(տվյալները ներկայացնել 01 հունիս 2024թ դրությամբ)

Ծածկագիր	21AG-1F004	
Կազմակերպություն	ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ	
Նախագծի Վերնագիր	Ինվազիվ բուսատեսակները Ա-ից Ֆ: Ազգային գույքագրում, ազդեցության գնահատում, վերահսկում և կառավարում Հայաստանի համար	
Ֆինանսավորման սկիզբ	21.10.2021թ	

Խմբի անդամներ (նշել խմբի բոլոր անդամներին, այդ թվում փոփոխված)

	Ազգանուն անուն հայրանուն	Պաշտոն (ղեկավար, կատարող, երիտասարդ)	Ամսեկան աշխատավարձի չափ ՀՀ դրամ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)	Կատարողի նախագծում ընդգրկված ժամանակահատված (սկիզբ – ավարտ)
1.	Ֆայվուշ Գեորգի Մարկի	ղեկավար	410 000	2021–2026
2.	Ալեքսանյան Ալլա Սամվելի	համաղեկավար	400 000	2021–2026
3.	Ղուկասյան Անահիտ Գեորգիի	կատարող	320 000	2021–2026
4.	Ջանջուղազյան Կարինե Զոհրաբի	կատարող	250 000	2021–2026
5.	Հովհաննիսյան Հռիփսիմե Իգիթի	Երիտասարդ	250 000	2021–2026
6.	Հաչատրյան Լիլիթ Ռոբերտի	Երիտասարդ	250 000	2021–2026
7.	Մսրյան Տաթևիկ Պերճի	կատարող	200 000	2021–2026
8.	Ղարիբյան Պարգև	երիտասարդ, մագիստրոս	150 000	2022–2026

Նախագծի շրջանակներում հրատարակած գիտական աշխատանքներ

1.Fayvush G. M., Aleksanyan A. S., Hovhannisyan H. I. // Invasion Vectors and Distribution of Some Invasive Plant Species in Armenia / Russian Journal of Biological Invasions, 2022, 13, 350-360, 10.1134/S2075111722030043, 2075-1117 , 2075-1125
2. Fayvush G., Ghukasyan A. // Karyo-geographical analysis of Armenian flora / Frontiers of Biogeography, 2023, 15.2, 1-8, 10.21425/F5FBG58420
3. Fayvush G., Aleksanyan A., Arakelyan M., Hovhannisyan H., Kalashian M. // Problems of Invasive Plants and Animals / Biodiversity of Armenia, 2023, 323-340.
4. Fayvush G. (ed.) // Biodiversity of Armenia / Biodiversity of Armenia, 2023, 1-440.
5. Fayvush G., Aleksanyan A. // Climate change and dynamics of vegetation in the Lesser Caucasus: an overview / Mountain landscapes in transition: effects of land use and climate change, 2022, 417-428.
6. Hovhannisyan H. Aprobation of the Australian method for assessing the risk of plant invasion in Armenia. Electronic journal of natural sciences NAS RA, 2023, 41(2), p. 15-20.

Նախագծի շրջանակներում գիտաժողովներ և այցելություններ

Fayvush G., Aleksanyan A., Hovhannisyan H. // Invasive plant species as threat to rare grassland's ecosystems / 2022/ Virtual conference "Asian Grassland", April, 19-21.
Դոնանա կենսաբանական կայան (Իսպանիա) – 2022, 2024

Ֆինանսական միջոցներ (ՀՀ դրամ)

		Պայմանագրով նախատեսված/փոխանցված	Փաստացի ծախսված	Մնացորդ
1.	Աշխատանքի վարձատրություն՝ ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները	69 260 000	69 260 000	0
2.	Այլ ծախսեր, այդ թվում՝	19 759 200	19 759 200	0
2.1	*սարքեր, նյութեր և ծառայություններ*	2 162 000	2 162 000	0
2.2	*գործուղումներ*	6 735 200	6 735 200	0
2.3	Խմբի կամ լաբորատորիայի ամրապնդում	10 087 000	10 087 000	0
2.4	*վերադիր ծախսեր*	775 000	775 000	0

Ընդամենը	89 019 200	89 019 200	0

Մնացորդի վերաբերյալ մեկնաբանություն՝ ըստ տողերի

Նախագծի շրջանակներում ձեռքբերված սարքեր/սարքավորումներ, գույք, գործուղում
(Անհրաժեշտության դեպքում Կոմիտեն կարող է պահանջել ծախսերի հաշիվ ապրանքագրերը)

	Անվանում	Քանակ	Ընդհանուր արժեք
1.	Համակարգչային տեխնիկա	7	1 990 000
2.	Ֆոտոխցիք	1	285 000
3.	անօդաչու սարք	1	417 000
4.	լուսային մանրադիտակ	1	510 000
5.	Ջրի թորման սարք	1	178 000
6.	Դռներ, պատուհաններ, հատակ, լուսավորություն		4 334 000
7.	Լաբորատոր և գրասենյակային կահույք	41	3 241 000
8.	Այլ տեխնիկա (սառնարան, պրոյեկտոր, պրոյեկցիոն էկրան, օդորակիչներ)	5	654 000
9.	Գործուղումներ		6 735 200

Նախագծի ընթացքն՝ ըստ օրացուցային պլանի (առավելագույնը 2 էջ)

Բոլոր աշխատանքները իրականացվեում են համաձայն աշխատանքային պլանի:
Համաձայն աշխատանքային պլանի ուսումնասիրությունների առաջին փուլը ընդգրկում էր միայն տեսական աշխատանքներ, այդ թվում առկա տվյալների բազայի, գրականության և հերբարիումային նյութերի վերլուծություն: Այս աշխատանքների իրականացման արդյունքում ընդհանրացվել են Հայաստանում կենսաբազմազանությանը և բնական էկոհամակարգերին, ինչպես նաև մարդու առողջության համար սպառնալիք հանդիսացող առավել վտանգավոր կամ պոտենցիալ մեծ վտանգ ներկայացնող 14 բուսատեսակների ներթափանցման և տարածման մասին տվյալները: Ցույց է տրվել, որ 14 տեսակից 8-ը (այդ թվում 5-ը ծառաբույսեր) Հայաստան են ներմուծվել նպատակային՝ որպես գեղազարդ բույսեր կամ բնակավայրերի կանաչապատման, ավտոմայրուղիների և երկաթուղիների երկայնքով պաշտպանական անտառաշերտերի ստեղծման համար: Մնացած տեսակներից 4-ը հանրապետության տարածքում են հայտնվել ինքնատարածման արդյունքում, իսկ մյուս 2-ը՝ ոչ նպատակային ներմուծման արդյունքում:
Այս 14 տեսակներից 7 տեսակի կողմից կենսաբազմազանությանն ու բնական էկոհամակարգերին սպառնացող վտանգի աստիճանը գնահատվել է բարձր, 4 տեսակի համար շատ բարձր և միայն 3 տեսակի մոտ գնահատվել է որպես պոտենցիալ ինվազիվ: Ընդ որում շատ բարձր վտանգի աստիճան ունեցող տեսակներից մեկը՝ *Ambrosia*

artemisiifolia վտանգի շատ բարձր աստիճան ունի նաև մարդու առողջության համար:
Շարունակվող տեսական աշխատանքները ներառել են առանձին բուսատեսակներ ինվազիվության ռիսկի գնահատումը: Ընտրվել էին Հայաստանի համար 13 օտարածին տեսակներ, որոնցից 11-ը արդեն իսկ համարվում են ինվազիվ տեսակներ Հայաստանի համար: Դրանք են՝ *Acer negundo, Ailanthus altissima, Ambrosia artemisiifolia, Cirsium incanum, Clematis vitalba, Conyza canadensis, Helianthus tuberosus, Hippophae rhamnoides, Leucanthemum vulgare, Robinia pseudoacacia, Silybum marianum*, իսկ մյուս 2-ը՝ *Grindelia squarrosa, Solidago canadensis* պոտենցիալ ինվազիվ:
Դեռևս 2017 թվական գիտական խմբի կողմից ստեղծվել և Կենսաբազմազանության համաշխարհային տեղեկատվական ֆոնդում (GBIF) տպագրվել է տվյալների բազա, որում ընդգրկվել են Հայաստանի ներմուծված բուսատեսակները (Ֆայվուշ և այլն., 2020): Այս բազան ընդգրկում էր շուրջ 400 բուսատեսակ: Ներկայիս ծրագրի շրջանակներում բազան համալրվել է՝ հասնելով 700 բուսատեսակի:
Հաշվետու ժամանակահատվածում իրականացված դաշտային ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են Հայաստանում օտարածին տեսակների մի շարք նոր ինվազիաներ: Մասնավորապես. *Impatiens glandulifera*:, *Nicandra physalodes, Phytolacca americana, Oenothera biennis, Amorpha fruticosa:*
Նախագծի շրջանակներում հրատարակվել են 6 գիտական աշխատանքներ:

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության անվանում	ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ
Մշտադիտարկված դրամաշնորհների ծածկագրեր	Հայաստանի բուսական աշխարհի ուսումնասիրության և պահպանության էկոլոգաաշխարհագրական ասպեկտները
Մշտադիտարկման իրականացման օօ/աա/տտտտ	25 Հունիս 2024թ.

Ներածական

Սույն թվականի հունիսի 25-ին կատարվել է մշտադիտարկում ՀՀ ԳԱԱ Ա.Թախտանջյանի անվան բուսաբանության ինստիտուտում: Կատարվել են շրջայցեր ինստիտուտի մասնաշենքերում և լաբորատորիաներում: Ծանոթացել ենք տարբեր գիտական խմբերի կողմից իրականացվող գիտահետազոտական աշխատանքներին, առկա սարքավորումներին, ծրագրերին և ՀՀ ԲԿԳԿ տարբեր դրամաշնորհների շրջանակներում ձեռք բերված ժամանակակից սարքեր/սարքավորումներին: Տնօրենի, գիտական լաբորատորիաների և գիտական խմբերի ղեկավարների կողմից ներկայացվել են տպագրված աշխատանքները, առակ դրամաշնորհները, նոր հնարավորությունները, ապագա ծրագրերը, առկա և սպասվող ներպետական և արտասահմանյան համագործակցությունները:

Գիտական արդյունք. **Կազմակերպության** կողմից հետազոտական հրապարակումների քանակը և որակը, ներառյալ ամսագրերը, գիտաժողովների նյութերը, գրքերը, արտոնագրերը, տեխնոլոգիայի բարելավումներ: Սա կարող է ներառել միջազգային հղումների քանակը, ամսագրերի ազդեցության գործակիցը և այլն:

Մշտադիտարկման ժամանակ ներկայացվեց, որ Կազմակերպությունը հաշվետու տարում տպագրել է 15 գիտական աշխատանքներ, իսկ ևս 10-ը ներկայացվել է տպագրության: Աշխատանքների մեծ մասը տպագրվել է Միջազգային Գիտական Շտեմարաններում: Կազմակերպությունում գործող գիտական խմբերը և լաբորատորիաները ակտիվ գործունեություն են ծավալում ՄԳՇ-ում տպագրությունների քանակը և որակը բարձրացնելու ուղղությամբ: Գիտաշխատողները հանդես են գալիս որպես ՄԳՇ-ում ներառված գրքերի տարբեր բաժինների հեղինակներ կամ խմբագրեր: Պետք է նշել, սակայն, որ տպագրությունների նման քանակը, ինստիտուտում գործող խմբերի և լաբորատորիաների քանակի, ինչպես նաև հենց գիտաշխատողների թվաքանակի համեմատ սակավ է:

Ֆինանսավորման աղբյուրներ. պետական դրամաշնորհներից, այլ կազմակերպություններից և բարեգործական աղբյուրներից **Կազմակերպության** ֆինանսավորում ապահովելու կարողությունը:

Մշտադիտարկման ժամանակ ներկայացվեց, որ մի շարք գիտական խմբերի և լաբորատորիաների ղեկավարներ հանդիսանում են ներպետական և միջազգային (հիմնականում ANSEF) դրամաշնորհների շահառուներ: Վերջիններս հնարավորություն են ընձեռել ներգրավել նոր ֆինանսներ՝ աշխատավարձերի, սարքերի և նյութերի ձեռք բերման

համար, ինչը ներգրավել է ինստիտուտի աշխատանքներում նոր երիտասարդների, ստեղծվել են նոր գիտական խմբեր (առկա է գիտական համայնքին ինտեգրման դրամաշնորհ), ներդրվել են նոր հետազոտական ուղղություններ: Տարբեր կազմակերպություններից և բարեգործական աղբյուրներից **Կազմակերպության** ֆինանսավորում ապահովելու կարողությունը վերապահումներով բավարար է, սակայն այդ ուղղությամբ շատ աշխատանքներ է պետք իրականացնել՝ աճող մարտահրավերներին դիմակայելու, նոր նախագծերի իրականացման, շենքային պայմանների լավարկման համար:

Համագործակցություններ. այլ հետազոտական կազմակերպությունների, ոլորտի գործընկերների, պետական կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ծավալն ու որակը:

Ինստիտուտը համագործակցում է ինչպես ներպետական հետազոտական և ուսումնական կազմակերպությունների, այնպես էլ տնօրենի և որոշ գիտաշխատողների ջանքերով արտասահմանյան ոլորտի առաջատար գիտական կենտրոնների և խմբերի հետ: Ներկայացվեց տարեցտարի համագործակցությունների թվաքանակի աճը, ցույց տրվեց նաև համագործակցությունների ազդեցությունը տպագրությունների քանակի ավելացման վրա: Պետք է նշել սակայն, որ քիչ է այն գիտաշխատողների քանակը, որոնք աշխատում են նոր համագործակցությունների ստեղծման ուղղությամբ:

Կրթություն, ուսուցում, գիտելիքի փոխանցում և տարածում. գիտնականների և հետազոտողների երիտասարդների կրթման և վերապատրաստման ուղղությամբ աշխատանքներ (սեմինարներ, պրակտիկաներ և մենթորության հնարավորություններ): Հետազոտության արդյունքները տարածելու ավելի լայն լսարաններին, ներառյալ հանրությանը, քաղաքականություն մշակողներին և ոլորտի շահագրգիռ կողմերին: Սա կարող է ներառել հանրային դասախոսություններ, լրատվամիջոցների ներգրավվածություն, իրազեկման ծրագրեր և գիտական հաղորդակցման նախաձեռնություններ:

Մշտադիտարկման ժամանակ նկատվեց ինստիտուտի ղեկավարության հուսադրող քաղաքականությունը, որը ուղղված է սերնդափոխության իրականացմանը և բարեփոխումներին: Բավականին շատ աշխատանքներ են տարվել, և ներկայումս իրականացվում են երիտասարդ կադրերի պատրաստման ուղղությամբ: Անցկացվում են պարբերաբար սեմինարներ և պրակտիկ աշխատանքներ: Չնայած այդ ամենին, վերապատրաստվող երիտասարդների քանակը դեռևս քիչ է, հատկապես արտասահմանյան գործընկերների գիտական կենտրոններում: Հատկանշական է կենսաբազմազանության ուղղությամբ նոր կրթական ծրագրերի ներդրումը ինստիտուտում: Ինստիտուտի աշխատակիցները ակտիվորեն ներկայացնում են իրենց կողմից ստացված արդյունքները հանրային դասախոսությունների, լրատվամիջոցների ներգրավվածություն, իրազեկման ծրագրերի և գիտական հաղորդակցման տարբեր նախաձեռնությունների միջոցով:

Ենթակառուցվածք և ռեսուրսներ. հետազոտական օբյեկտների, սարքավորումների և օժանդակ ծառայությունների առկայությունը և որակը, որոնք տրամադրվում են **Կազմակերպության** կողմից իր հետազոտողներին:

Մշտադիտարկումը ցույց տվեց, որ հետազոտական օբյեկտների, սարքավորումների և օժանդակ ծառայությունների առկայությունը և որակը, որոնք տրամադրվում են **Կազմակերպության** կողմից իր հետազոտողներին բավարար մակարդակի վրա է:

Եզրակացություն

Հիմք ընդունելով վերոգրյալը տալիս եմ **Դրական** եզրակացություն:

Առաջարկություններ

1. ՄԳՇ-ում տպագրությունների քանակի ավելացում 2. Միջազգային դրամաշնորհների քանակի ավելացում 3. Նոր ֆինանսական աղբյուրների ներհոսք, որը հնարավորություն կտա բարելավել շենքային պայմանները, ինչը որոշ մասնաշենքերում վատ վիճակում է: 4. Երիտասարդ աշխատակիցների քանակի ավելացում 5. Վերապատրաստումների քանակի ավելացում և նոր հետազոտական մեթոդների ներդրում 6. Գիտական թեմաների թարմացում, նոր համարձակ և բեկումնային գիտական ուղղությունների ներդրում 7. Ներպետական և միջազգային համագործակցությունների ավելացում 8. Ակտիվ գիտական խմբերի ավելացում

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության անվանում	ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ
Մշտադիտարկված դրամաշնորհների ծածկագրեր	Բազային ֆինանսավորմամբ ծրագիր, 21AG-1F004, 23IRF-1E02, 22rl-055, 23RL-1F017 դրամաշնորհային ծրագրեր
Մշտադիտարկման իրականացման օօ/աա/տտտտ	25/06/2024

Ներածական

ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտը ՀՀ ԳԱԱ հիմնարար և կիրառական բնույթի հետազոտական աշխատանքներ իրականացնող գիտական կենտրոններից է, որտեղ հաջողությամբ իրականացվում են պետական բազային, դրամաշնորհային և միջազգային ֆինանսավորմամբ ՀՀ Ֆլորայի բուսական ծածկույթի, էվոլյուցիոն կարգաբանության, բույսերի ֆիզիոլոգիայի, ինչպես նաև բուսաբանական այգիներում (Երևանի, Վանաձորի և Սևանի) բույսերի ներմուծման ու կլիմայավարժեցման ուղղություններով հիմնարար և կիրառական բնույթի հետազոտություններ և որտեղ ներգրավված են 5 ստորաբաժանումների 44 գիտական աշխատակիցներ:

Գիտական արդյունք. **Կազմակերպության** կողմից հետազոտական հրապարակումների քանակը և որակը, ներառյալ ամսագրերը, գիտաժողովների նյութերը, գրքերը, արտոնագրերը, տեխնոլոգիայի բարելավումներ: Սա կարող է ներառել միջազգային հղումների քանակը, ամսագրերի ազդեցության գործակիցը և այլն:

Կազմակերպության կողմից իրականացվող հետազոտությունները տպագրվում են տեղական և միջազգային գրախոսվող պարբերականներում մենագրությունների, հոդվածների և գիտաժողովների նյութերի հավաքածուներում (https://botany.am/hy/publications/). 2024թ հունիսի 1-ի դրությամբ ընթացիկ տարում տպագրվել են 15 գիտական աշխատանքներ, ևս 10-ը ներկայացված է տպագրության:

Ֆինանսավորման աղբյուրներ. պետական դրամաշնորհներից, այլ կազմակերպություններից և բարեգործական աղբյուրներից **Կազմակերպության** ֆինանսավորում ապահովելու կարողությունը:

Կազմակերպությունը բացի բազային ֆինանսավորմամբ իրականացվող հետազոտություններից, հատկապես վերջին տարում խիստ ակտիվ է ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ կողմից հայտարարվող պետական դրամաշնորհային մրցույթներում: Մասնավորապես հանդիսանում է ներքոհիշյալ դրամաշնորհային ծրագրերի շահառու

- Արտերկրի գիտնականների ՀՀ գիտական համայնք ինտեգրման՝ ***23IRF-1E02*** ծածկագրով նախագիծ,
- Հեռավար լաբերորատորիաների ստեղծման՝ ***22rl-055*** ծածկագրով նախագիծ,
- ***23RL-1F017*** ծածկագրերով նախագծեր,

- Առաջատար հետազոտությունների աջակցության ***21AG-1F004*** նախագիծ

Բացի այդ, կազմակերպությունը սարք/սարքավորումների ձեռքբերմանն ուղղված մրցույթի շրջանակում վերազինվել է, մասնավորապես Բույսերի ֆիզիոլոգիայի հետազոտությունների համակարգով: Հատկանշական է նաև «Սևան» Ազգային Պարկի կառավարման պլանի կազմմանն ուղղված ծրագրում Կազմակերպության ներգրավվածությունը, որն իրականացվում է Գերմանիայի Միջազգային Համագործակցության ընկերության (ԳՄՀԸ)-ի եւ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) կողմից, Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության հետ համատեղ:

Սա խոսում է այն մասին, որ կազմակերպության գիտական և վարչասպասարկող անձնակազմը մրցունակ է, ոչ միայն գիտական հետազոտությունների իրականացման, այլ նաև գիտական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ լրացուցիչ ֆոնդահայթայթման կարողությունների շնորհիվ:

21AG-1F004 նախագիծի վերաբերյալ ընդգծեմ, որ համաձայն ներկայացված հաշվետվության նախագծի աշխատանքներն ընթանում են օրացույցային պլանի համաձայն: Գիտական թիմը նախագծի երրորդ տարում հասցրել է տպագրել 6 աշխատանք, որոնցից 2-ը միջազգային գրախոսվող ամսագրում, իսկ 1-ը՝ միջազգային մենագրության ենթաբաժին է:

Համագործակցություններ. այլ հետազոտական կազմակերպությունների, ոլորտի գործընկերների, պետական կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ծավալն ու որակը:

Կազմակերպության տեղական և միջազգային ակտիվ համակործակցության ծավալի և որակի մասին խոսում են գործող ծրագրերը, ինչպես նաև համատեղ միջազգային հրատարակությունները:

Կրթություն, ուսուցում, գիտելիքի փոխանցում և տարածում. գիտնականների և հետազոտողների երիտասարդների կրթման և վերապատրաստման ուղղությամբ աշխատանքներ (սեմինարներ, պրակտիկաներ և մենթորության հնարավորություններ): Հետազոտության արդյունքները տարածելու ավելի լայն լսարաններին, ներառյալ հանրությանը, քաղաքականություն մշակողներին և ոլորտի շահագրգիռ կողմերին: Սա կարող է ներառել հանրային դասախոսություններ, լրատվամիջոցների ներգրավվածություն, իրազեկման ծրագրեր և գիտական հաղորդակցման նախաձեռնություններ:

Մոնիթորինգի նպատակով այցելության ընթացքում ակնհայտ էր երիտասարդացման միտումը կազմակերպությունում գործող ծրագրերում, որոնց կատարողական կազմերը պարտադիր կերպով ենթադրում են երիտասարդ՝ մինչև 35 տարեկան կադրերի, առկայություն: Վերջիններս անպայմանորեն ենթադրում են նաև կադրերի վերապատրաստում, ուստի ակնահյտ է կազմակերպությունում սերնդափոխության միտումը, որն այդուհանդերձ պետք է ակտիվ պահել:

Ենթակառուցվածք և ռեսուրսներ. հետազոտական օբյեկտների, սարքավորումների և օժանդակ ծառայությունների առկայությունը և որակը, որոնք տրամադրվում են **Կազմակերպության** կողմից իր հետազոտողներին:

Մոնիթորինգի ընթացքում պարզ դարձավ, որ կազմակերպության շենքային պայմանները լուրջ վերանորոգումների կարիք ունենք: Այդուհանդերձ, Կազմակերպությունն անում է հնարավորը հետազոտությունների համար անհրաժեշտ առկա ենթակառուցվածքների

պահպանման և նոր ենթակառուցվածքների ստեղծման ուղղությամբ, որին մեծապես նպաստում են նաև պետական գիտական դրամաշնորհային ծրագրերը: Ծավալային վերանորոգում է իրականացվել և իրականացվում հատկապես վերջիններիս շրջանակում:

Եզրակացություն

ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտում նշանակալի փոփոխություններն ակնհայտ են: Նշանակալիորեն բարելավված են գիտական ենթակառուցվածքները: Գործող նախագծերը էապես աշխուժացրել են և կշարունակեն աշխուժացնել գիտական գործունեությունը՝ մասնավորապես նպաստելով անձնակազմի երիտասարդացմանը և գիտական սերնդափոխությանը:
Չնայած դրական տեղաշարժին Ինստիտուտում դեռ առկա են խնդիրներ, կապված մասնավորապես շենքային պայմանների հետ (որոշ հատվածներ գտնվում են վթարային վիճակում և վտանգավոր են անգամ այցելության համար), որտեղ անհրաժեշտ են կապիտալ ֆինանսական ներդրումներ հիմնարար գիտական ֆոնդի պահպանման համար:
21AG-1F004 նախագծի միջնաժամկետ հաշվետվության քանակական նվազագույն պահանջներն հաջողությամբ իրականացված են տպագրությունների տեսքով:

Առաջարկություններ

Դիտարկել շենքային պայմանների, մասնավորապես հիմնարար գիտական ֆոնդի (օր՝. ՀՀ հերբարիումը) պահպանման պայմանների բարելավվման հնարավորությունները:

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկում – 2024

ՏԵՂԵԿԱՆՔ

(Ծրագրի/թեմայի կատարման ընթացքի, ձեռքբերված արդյունքների, պայմանագրով նախատեսված առաջադրանքին, օրացուցային պլանին և ծախսերի նախահաշվին համապատասխանության մասին)

Կազմակերպության անվանում	**ՀՀ ԳԱԱ «Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ**
Ծրագրի/թեմայի ծածկագիր և վերնագիր (ըստ հավելվածների)	
1. (Հավելված 1)	**24INSTBOT-CON-I-1F** Հայաստանի բուսական աշխարհի ուսումնասիրության և պահպանության էկոլոգաաշխարհագրական ասպեկտները
2. (Հավելված 2)	**21AG-1F004** Ինվազիվ բուսատեսակները Ա-ից Ֆ: Ազգային գույքագրում, ազդեցության գնահատում, վերահսկում և կառավարում Հայաստանի համար
Մշտադիտարկման ժամկետը	«30» մայիսի 2024 թ. - «20» սեպտեմբերի 2024թ.
Մշտադիտարկում իրականացնելու հիմքը	ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի 2024 թվականի մայիսի 3-ի N 141-Ա հրաման

Լրիվ ծանրաբեռնվածությամբ աշխատակիցներ (շաբաթական 40 ժամ)

	Պաշտոնի անվանում	Քանակ
1.	Ստորաբաժանման ղեկավար	5
2.	Խմբի ղեկավար	1
3.	Գլխավոր գիտաշխատող	0
4.	Առաջատար գիտաշխատող	3
5.	Ավագ գիտաշխատող	5
6.	Գիտաշխատող	9
7.	Կրտսեր գիտաշխատող	4
8.	Ավագ լաբորանտ	3

9.	Լաբորանտ	1
10	Ավագ Ճարտարագետ	0
11.	Ճարտարագետ	0

Հավելված 1
(ըստ յուրաքանչյուր ծրագրի/թեմայի)

<u>Մշտադիտարկումն իրականացրած</u> **<u>աշխատանքային խումբ</u>** (ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի 2024 թվականի մայիսի 10-ի N 146-Ա/Ք հրաման)	Ղարիբյան Կարեն Սուքիասյան Նաիրա Կարապետյան Լարիսա Ավթանդիլյան Նիկոլայ Ասմարյան Շուշանիկ
<u>Մշտադիտարկումն իրականացվել է ըստ հետևյալ փաստաթղթերի/նյութերի.</u> 1. ՀՀ ԳԱԱ և ՀՀ ԳԱԱ «Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի միջև 2024 թվականի հունվարի 29-ին կնքված N 1-14/24-I/INSTBOT պայմանագիր, 2. ընթացիկ հաշվետվություն՝ այդ թվում տեղեկություններ կազմակերպության ֆինանսական միջոցների օգտագործման մասին, 3. այցելություն	

Հրատարակած գիտական աշխատանքներ (քանակական և որակական)

2024թ. հունիսի 1-ի դրությամբ ընթացիկ տարում տպագրվել են 15 գիտական աշխատանքներ, ևս 10-ը ներկայացված է տպագրության: Աշխատանքների մեծ մասը տպագրված են Միջազգային Գիտական Շտեմարաններում:

Գիտաժողովներ, այցելություններ, գիտական միջոցառումներ

Թվով 5 գիտաժողովներ, այցելություններ և գիտական միջոցառումներ:

Համագործակցություն (այլ հետազոտական կազմակերպությունների, ոլորտի գործընկերների, պետական կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն)

Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտը համագործակցում է ինչպես ներպետական հետազոտական և ուսումնական կազմակերպությունների, այնպես էլ արտասահմանյան ոլորտի առաջատար գիտական կենտրոնների և խմբերի հետ:

Նյութատեխնիկական բազա (սարքեր/սարքավորումներ, գույք)

Ներկայացված չէ:

Ֆինանսական

Ներկայացված ֆինանսական ծախսերը հաստատող փաստաթղթերը համապատասխանում են նախահաշվին, թերություններ չեն հայտնաբերվել:

Ամփոփում (մշտադիտարկման արդյունքներ) և առաջարկություն

ՀՀ ԳԱԱ «Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ում իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանասավորման «Հայաստանի բուսական աշխարհի ուսումնասիրության և պահպանության էկոլոգաաշխարհագրական ասպեկտները» (ծածկագիր՝ 24INSTBOT-CON-I-1F) թեմայի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում իրականացված աշխատանքները մեծամասամբ համապատասխանում են ՀՀ ԳԱԱ և ՀՀ ԳԱԱ «Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի միջև 2024 թվականի հունվարի 29-ին կնքված N 1-14/24-I/INSTBOT պայմանագրի դրույթներին: Մասնագետների կողմից առաջարկվում է ՄԳՇ-ում տպագրությունների, միջազգային դրամաշնորհների, երիտասարդ աշխատակիցների քանակի ավելացում, գիտական թեմաների թարմացում, նոր համարձակ և բեկումնային գիտական ուղղությունների ներդրում, ինչպես նաև ներպետական և միջազգային համագործակցությունների ավելացում:

Հավելված 2
(ըստ յուրաքանչյուր ծրագրի/թեմայի)

Խմբի անդամներ (նշել խմբի բոլոր անդամներին, այդ թվում փոփոխված)

	Ազգանուն անուն հայրանուն	Պաշտոն (ղեկավար, կատարող, երիտասարդ)	Ամսեկան աշխատավարձի չափ ՀՀ դրամ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)	Կատարողի նախագծում ընդգրկված ժամանակահատված (սկիզբ – ավարտ)
1.	Ֆայվուշ Գեորգի Մարկի	ղեկավար	410 000	2021–2026
2.	Ալեքսանյան Ալլա Սամվելի	համաղեկավար	400 000	2021–2026
3.	Ղուկասյան Անահիտ Գեորգիի	կատարող	320 000	2021–2026
4.	Ջանջուղազյան Կարինե Զոհրաբի	կատարող	250 000	2021–2026
5.	Հովհաննիսյան Հռիփսիմե Իգիթի	երիտասարդ	250 000	2021–2026

6.	Հաչատրյան Լիլիթ Ռոբերտի	երիտասարդ	250 000	2021–2026
7.	Մսրյան Տաթևիկ Պերճի	կատարող	200 000	2021–2026
8.	Ղարիբյան Պարգև	երիտասարդ, մագիստրոս	150 000	2022–2026

<u>Մշտադիտարկումն իրականացրած աշխատանքային խումբ</u> (ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի 2024 թվականի մայիսի 10-ի N 146-Ա/Ք հրաման)	Ղարիբյան Կարեն Սուքիասյան Նաիրա Կարապետյան Լարիսա Ավթանդիլյան Նիկոլայ Ասմարյան Շուշանիկ

<u>Մշտադիտարկումն իրականացվել է ըստ հետևյալ փաստաթղթերի/նյութերի.</u>

1. ՀՀ ԿԳՄՍ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և ՀՀ ԳԱԱ «Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի միջև կնքված 2021 թվականի հոկտեմբերի 21-ի N 1-14-21AG պայմանագիր,
2. ընթացիկ հաշվետվություն՝ այդ թվում տեղեկություններ կազմակերպության ֆինանսական միջոցների օգտագործման մասին,
3. այցելություն

Հրատարակած գիտական աշխատանքներ (քանակական և որակական)

2024թ. հունիսի 1-ի դրությամբ ընթացիկ տարում տպագրվել են թվով 6 գիտական աշխատանքներ:

Գիտաժողովներ, այցելություններ, գիտական միջոցառումներ

Թվով մեկ գիտական միջոցառում:

Համագործակցություն (այլ հետազոտական կազմակերպությունների, ոլորտի գործընկերների, պետական կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն)

Նախագծի շրջանակներում ձեռք են բերվել 7 համակարգչային տեխնիկա,1-ական ֆոտոխցիկ, անօդաչու սարք, լուսային մանրադիտակ և ջրի թորման սարք, ինչպես նաև 41 լաբորատոր և գրասենյակային կահույք ու 6 այլ տեխնիկա (սառնարան, պրոյեկտոր, պրոյեկցիոն էկրան, օդորակիչներ):

Ֆինանսական

Ներկայացված ֆինանսական ծախսերը հաստատող փաստաթղթերը համապատասխանում են նախահաշվին, թերություններ չեն հայտնաբերվել.

Ամփոփում (մշտադիտարկման արդյունքներ) և առաջարկություն

ՀՀ ԳԱԱ «Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ում իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման «Ինվազիվ բուսատեսակները Ա-ից Ֆ: Ազգային գույքագրում, ազդեցության գնահատում, վերահսկում և կառավարում Հայաստանի համար» (ծածկագիր՝ 21AG-1F004) թեմայի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում իրականացված աշխատանքները մեծամասամբ համապատասխանում են ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և ՀՀ ԳԱԱ «Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի միջև կնքված 2021 թվականի հոկտեմբերի 21-ի N 1-14-21AG պայմանագրի դրույթներին: Մասնագետների կողմից առաջարկվում է ՄԳՇ-ում տպագրությունների և երիտասարդ աշխատակիցների քանակի ավելացում, ինչպես նաև ներպետական և միջազգային համագործակցությունների ավելացում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Ա. ԹԱԽՏԱՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ БОТАНИКИ ИМЕНИ А. ТАХТАДЖЯНА
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF REPUBLIC ARMENIA
INSTITUTE OF BOTANY AFTER A. TAKHTAJYAN

0063 Երևան, Աճառյան 1
Հեռ. (374 10) 621 762
Էլ. հասցե՝ botanyinst@sci.am

0063 г. Ереван, ул. Ачаряна 1
Тел. (374 10) 621 762
Эл. почта : botanyinst@sci.am

0063 Yerevan, Acharyan str. 1
Tel. (374 10) 621 762
E-mail: botanyinst@sci.am

№ 24-57/317
29. 11. 2024

ՀՀ ԿԳՄՍ նախարարության
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի
Գլխավոր քարտուղար՝
Լ. Ֆարմանյանին

ՀՀ ԳԱԱ Ա.Թախտաջյանի անվան
Բուսաբանության ինստիտուտի
տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
Ա. Ղուկասյանից

Հարգելի պարոն Ֆարմանյան,

Ի պատասխան Ձեր թիվ 9.0/9.2.2/35754-2024 գրության տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնոլոգիական գործունեության 2024 թ-ի մշտադիտարկման արդյունքում ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի 24INSTBOT-CON-I-1F ծածկագրով «Հայաստանի բուսական աշխարհի ուսումնասիրության և պահպանության էկոլոգաաշխարհագրական ասպեկտները» բազային թեմայի շրջանակներում 2024 թ. նոյեմբերի 26-ի դրությամբ տպագրությունների քանակը կազմում է՝ 45 գիտական հոդված, որոնցից՝ 42-ը տպագրվել են բարձր ազդեցության գործակից ունեցող ամսագրերում, իսկ միջազգային գիտաժողովի նյութերի քանակը՝ 16, ուստի՝ տպագրությունների նման քանակը համապատասխանում է ինստիտուտի գիտաշխատողների թվաքանակին:

Հարգանքով,

Տնօրենի ժ/պ՝ Ա. Ղուկասյան

85861
03 12 24